**Նոտարական ակտի կոդ:** 543-20240507-79-7922835
**Նոտարական ակտի գաղտնագիր:** Q9TUPZ

# Լ Ի Ա Զ Օ Ր Ա Գ Ի Ր

Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Աշոցք
Երկու հազար քսանչորս թվականի մայիսի յոթին

Ես՝ **Կարեն Վարուժանի Պետրոսյանս,** ծնված՝ 04.10.1988թ. /չորսը հոկտեմբերի հազար ինը հարյուր ութսունութ թվականին/, նույնականացման քարտի համարը՝ 005536768, տրված՝ 03.03.2015թ. 034-ի կողմից, բնակության վայրը՝ Շիրակ, Աշոցք, Բավրա, 3-րդ /երրորդ/ փողոց, տուն 10 /տաս/,

**լիազորում եմ Կորյուն Միքայելի Սումբուլյանին,** ծնված՝ 26.01.1968թ. /քսանվեցը հունվարի հազար ինը հարյուր վաթսունութ թվականին/, նույնականացման քարտի համարը՝ 005013081, տրված՝ 07.07.2014թ. 034-ի կողմից, բնակության վայրը՝ Շիրակ, Աշոցք, Բավրա, 3-րդ /երրորդ/ փողոց, տուն 1 /մեկ/,

ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով ինձ պատկանող՝ մարզ Շիրակ, համայնք Աշոցք, գյուղ Բավրա, հողամաս հասցեում գտնվող անշարժ գույքը /բնակավայրերի/, կադաստրային ծածկագիր՝ 08-026-0009-0006, **ՆՎԻՐԵԼ** կամ **ՆՎԻՐԱԲԵՐԵԼ Հայաստանի Հանրապետությանը,**

հանդես գալ Կադաստրի կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանումում, բանկում, նոտարական գրասենյակում, ստորագրել ցանկացած պայմաններով համապատասխան պայմանագիրը, համաձայնագիրը, ինչպես նաև հանդես գալ քաղաքապետարանում, մարզպետարանում, համայնքապետարանում, գյուղապետարանում, վարչական համապատասխան շրջաններում, համատիրությունում, չափագրում իրականացնող կազմակերպություններում, ապահովագրական կազմակերպություններում, «Ջրմուղ-Կոյուղի» Փակ Բաժնետիրական Ընկերությունում, ստորագրել պայմանագրեր, ՀՀ Ոստիկանության անձնագրային բաժնում, Քաղաքացիական Կացության Ակտերի Գրանցման գործակալությունում և համապատասխան տարածքային ստորաբաժանումներում, արխիվում, ԴԱՀԿ ծառայությունում, ՀՀ պետական և ոչ պետական այլ մարմիններում, կազմակերպություններում,

այդ նպատակով իմ անունից տալ դիմումներ, հայտարարություններ, համաձայնություններ, կատարել վճարումներ, ստանալ գումար, ձևակերպել և ստանալ անհրաժեշտ փաստաթղթեր, տեղեկատվություն, տեղեկանքներ՝ այդ թվում նաև միասնական տեղեկանք անշարժ գույքի սահմանափակումների վերաբերյալ, պատճեններ, կրկնօրինակներ, որոշումներ, այդ թվում՝ հասցեափոխության վերաբերյալ, քաղվածքներ, հատակագծեր, հավելվածներ, գրություններ, նամակներ, ստորագրել իմ փոխարեն և կատարել այն բոլոր գործողությունները, որոնք կապված են տվյալ հանձնարարության հետ:

Ես՝ **Կարեն Վարուժանի Պետրոսյանս** նոտարի ներկայությամբ հաստատում եմ, որ գործունակության մեջ սահմանափակված չեմ, իմ նկատմամբ չկա սահմանված խնամակալություն, հոգաբարձություն և պատրոնաժ, չեմ գտնվում թունավոր նյութերի, թմրանյութերի, ալկոհոլի ազդեցության տակ, իմ առողջական վիճակով կարող եմ ինքնուրույն իրականացնել և պաշտպանել իմ իրավունքները և կատարել պարտականություններս, չեմ տառապում հիվանդություններով, որոնք կարող են խոչընդոտել իմ կողմից տրվող լիազորագրի էությունը գիտակցելուն և ընկալելուն, ինչպես նաև հաստատում եմ, որ ինձ մոտ բացակայում են սույն լիազորագիրը տալուն հարկադրող պարտականություններ: Լիազորագիրը տրված է իմ կողմից կամավոր:

**Լիազորագիրը տրված է երեք տարի ժամկետով:**

ԼԻԱԶՈՐՈՂ
Կարեն Վարուժանի Պետրոսյան ---------Պետրոսյան Կարեն---------------------

Երկու հազար քսանչորս թվականի մայիսի յոթին
Սույն լիազորագիրը վավերացված է իմ` Հայաստանի Հանրապետության **ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ** նոտարական տարածքի նոտար` **Քրիստինե Սամվելի Մարտիրոսյանիս** կողմից:
Լիազորագիրը ստորագրված է քաղաքացի` **Կարեն Վարուժանի Պետրոսյանի** կողմից իմ ներկայությամբ: Լիազորողի ինքնությունը և գործունակությունը ստուգված է:
Գրանցված է գրանցամատյանում թիվ ......802......ով:

Գանձված է պետական տուրք երեք հազար ՀՀ դրամ և ծառայության վճար հինգ հազար ՀՀ դրամ ` համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար Քրիստինե Սամվելի Մարտիրոսյան